«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

# Ավարտական հետազոտական աշխատանք

**Թեմա՝** Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

**Դաստիարակ՝** Ղազարյան Արմինե

**Հաստատություն՝** «Երևանի հ.159 մսուր մանկապարտեզ » ՀՈԱԿ

**Ղեկավար՝** Ժաննա Ավետիսյան

ԵՐԵՎԱՆ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...…….....2

ԳԼՈՒԽ 1

ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ.....…….....….5

ԳԼՈՒԽ 2

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԲԱՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ «ԱՄԱՆՈՐՅԱ ՀՐԱՇՔ»…….....….....…….……15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....……18

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ…….....……...…19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……....…….……20

# Ներածություն

Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերընդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Պատմության ընթացքում կազմավորվել են մի քանի այդպիսի միջոցներ կամ ձևեր: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակագործնական բնույթ: Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր են: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ[1]: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսից դուրս չի կատարվում ո՛չ մոգական գործողություն, ո՛չ կրոնական պաշտամունք: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:

Ծեսը մարդու կյանքի ամենակարևոր բաղկացուցիչն է և իրենից ենթադրում է դինամիկ զարգացում, այսինքն յուրաքանչյուր սերունդ և յուրաքանչյուր դարաշրջան արտացոլվում է ծիսատոնական արարողակարգերում և դրանից խուսափելով կարող ենք հանգել ծեսի վերացմանը:

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլելէթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է:

1 Ионин Л. Г. Социология культуры, М., 2004, с. 166

Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

**Թեմայի արդիականությունը:** Քանի որ երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով նաև, ուստի խիստ անհրաժեշտ է կրթական գործընթացում մշտապես ուսումնասիրել և կատարելագործել դրանց կազմակերպումը, գտնել նորանոր մեխանիզմներ վերջինս ավելի դյուրընկալելի ձևով անելու համար:

Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով:Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Հենց այս համատեքտում էլ պետք է առանձնացնել և կարևորել կրթական տարբեր օղակների ունեցած դերը:

**Աշխատանքի նպատակը:** Մեր՝ որպես կթական գործընթացի կազմակերպիչների, աշխատանքն իրենից ենթադրում է ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը: Աշխատանքի նպատակն է այս ամենի արդյունավետ կազմակերպման առանձնահատկությունների բացահայտումը:

**Աշխատանքի օգտակարությունը:** Մենք ցանկանում ենք ցույց տալ, որ ծեսը որպես ինտեգրված թեմատիկ միավոր, կարող է դառնալ կրթության կարևոր բաղկացուցիչ մաս՝ ներառելով ամենատարբեր հմտությունների ու կարողությունների՝ առերևույթ միգուցե չերևացող, բայց իրականում շատ խորքային հիմք:

Թեմայի շարադրման ընթացքում հանդիպող մտքերի և ձևակերպումների հիմքում ընկած են նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի ընդհանուր դրույթները: Հարկ ենք համարում հատկապես առանձնացնել նախադպրոցական

տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունների թվարկման 9-րդ կետի 6-րդ ենթակետը՝ մշակութային կարողունակության վերաբերյալ։ [2]

Բացի այս, բնականաբար, թեման ընդհանուր առմամբ համապատասխանում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի ընդհանուր պահանջներին։

Աշխատանքը գրելիս մենք կարևորել ենք բազմաբովանդակ և բազմալեզու գրականության օգտագործումը։

Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու մասերից, եզրակացությունից, առաջարկությունից և օգտագործված գրականության ցանկից։

2 https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ, 9-րդ կետի 6-րդ ենթակետ։

# ԳԼՈՒԽ 1

# ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Անձնավորության հիմնական չափանիշներն են գիտակցությունը և ինքնագիտակցությունը, որոնք մարդուն դարձնում են ինքնուրույն և վերափոխող գործունեության ընդունակ: Մարդու զարգացումը բարդ, երկարատև և հակասություններով լի գործընթաց է, որի ընթացքում քանակական փոփոխությունները վերածվում են որակի և բոլոր փոփոխությունները փոխպայմանավորված են[3]:

Երեխայի զարգացմանը, ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն միավորում են երեք խմբի՝ կենսաբանական, սոցիալական և մանկավարժական[4]:

Մանկավարժական գործոնների շարքին է պատկանում երեխայի ինքնուրույն գործունեությունը, որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների մանկավարժական ներգործության շնորհիվ: Ինքնուրույնության դրսևորումները խթանում են երեխայի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների[5]: Երեխայի ինքնուրույնության արգելակումը մեծահասակների կողմից բացասաբար է անդրադառնում և խոչընդոտում է նրա ընդհանուր զարգացման գործընթացը: Երեխայի ինքնուրույնությունը՝ նրա զարգացման և անձնավորության ձևավորման կարևորագույն գործոն է[6]:

Երեխայի զարգացման գործընթացում բավական պատասխանատու է մանկավարժական գործոնների դերը:

Նախադպրոցական մանկավարժությունը ամենայն պատասխանտվությամբ է վերաբերվել նախադպրոցական տարիքում առաջատար՝ խաղային գործունեության նշանակությանը նախադպրոցականի կյանքում: Խաղի ծագման և էության մասին

---

3Магомедов Н. М. Методология и методика свободного воспитания. - Самара, 1995, с. 29.

4 Նույն տեղում:

5Ներսիսյան Լ., Ազատ հաղորդակցության և ինքնակրթության դերը ուսուցման համակարգում: Գեղարվեստական միտք, Երևան, 2013թ, էջ 40:

6Ամիրջանյան Յու., Սահակյան Ա.,Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 50:

բազմաթիվ տեսությունների մանկավարժական վերլուծության հիման վրա հոգեբանորեն հիմնավորվել և մեկնաբանվել է խաղի ժամանակակից տեսությունը: Երեխայի զարգացմանը նպաստում է զարգացնող միջավայրը, որը երեխայի զարգացման դրդող «առարկայական տարածությունն» է և համարժեք բարոյահոգեբանական մթնոլորտը:

Նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի համաձայն, նախադպրոցականի ուսուցման կազմակերպման ամենաարդյունավետ, հետևաբար հիմնական ձևը դիդակտիկ խաղն է, որն աստիճանաբար փոխարինելու է ուսուցման կազմակերպման «դասային» ձևերը:

Ուսուցման գործընթացը շարունակվում է նաև պարապմունքներից և դիդակտիկ խաղերից դուրս՝ ազատ ժամանցի, հանդեսների և տոնակատարությունների, զբոսանքի, խաղերի ընթացքում: Ուսուցման կազմակերպման ավանդական ձևերը պարբերաբար կատարելագործվում են, մշակվում են և մանկապարտեզ են մուտք գործում ուսուցման կազմակերպման նոր ձևեր:

Դրանցից են.

- ինտելեկտուալ խաղերը,
- խաղ-բանավեճերը,
- խաղ-մրցույթները:

Ուսուցման գործընթացը նախադպրոցական տարիքում ուղղված է երեխայի անձի զարգացմանը, այն լրացնում է նախադպրոցականի դաստիարակության բարդ գործընթացին:

Մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացում ծրագրավորված կազմակերպվում են բազմատեսակ պարապմունքներ,

- խաղ- պարապմունքներ,
- պարապմունք-վիկտորինաներ,
- էքսկուրսիաներ,
- տոնահանդեսներ
- ծեսեր և այլն:

Պարապմունքների համակարգում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կերպարվեստային պարապմունքները:

***Կերպարվեստային գործունեություն***

Մանկապարտեզում կերպարվեստի ծրագրի նպատակն է երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխանող գեղարվեստական արժեք ներկայացնող նյութերի հիման վրա երեխաների կերպարվեստային գործունեությունը[7]:

Կերպարվեստային ընդունակությունների և պատկերացումների ձևավորումը հիմնականում տեղի է ունենում ծեփակերտման,նկարչական աշխատանքների միջոցով:

Այս դեպքում առավել արդյունավետ դեր են կատարում շրջապատող կյանքի կոնկրետ յուրահատկությունները՝ բնական լանդշաֆտը, նրա գունային գամման, ազգային նախշերը, կենցաղի առանձնահատկությունները հաշվի առնող թեմատիկայի միջոցով:

Նման թեմաներ կարող են լինել ազգային ծեսերն ու ծիսակատարությունները:

Պետք է նկատի ունենալ, որ երեխաների գեղագիտական դաստիարակությունը իրականացնելիս օգտագործում ենք ժողովրդական ստեղծագործությունների լավագույն նմուշները:

***Կերպարվեստային գործունեության խնդիրները***

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կերպարվեստային գործունեության պետական ծրագրի հիմնական խնդիրներն են՝

- զարգացնել երեխաների գեղարվեստա — ստեղծագործական ունակությունները.
- երեխաների մեջ ամրապնդել և կատարելագործել կերպարվեստային գործունեության այբուբենը՝ գծանկարի, գունանկարի, ծեփակերտման, ապլիկացիայի, դեկորատիվ կիրառական աշխատանքի հիմունքներ.
- նկարչության ուսուցում բնօրինակից հիշողությամբ և երևակայությամբ, և դրա հիման վրա երեխաների տեսողական հիշողության տարրական պատկերացումների, ստեղծագործական երևակայության զարգացումը.
- երեխաների գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրականության երևույթների և առարկաների նկատմամբ հուզական-զգայական վերաբերմունքի զարգացումը և կատարելագործումը.
- երեխաների մեջ ձևավորել կերպարվեստի նկատմամբ սիրո և հետաքրքրություն,
- նպաստել երեխաների անհատականության զարգացմանը:

---

7Ներսիսյան Լ., Մեթոդական համակարգը գեղարվեստական մանկավարժության մեջ: Գեղարվեստական միտք, Երևան, 2012, էջ 35:

Երեխաների կերպարվեստային և ստեղծագործական գործունեության արդյունավետությունը կախված է մի շարք պայմաններից.

ա) ուսուցման մեթոդների ճիշտ օգտագործումը.

բ) կերպարվեստի պարապմունքների որոշակի ռիթմով հերթագայելը (բնօրինակից նկարչության մի պարապմունքին հաջորդելու է ծեփակերտումդ, ապա ապլիկացիան և այլն)։

Վերը նշվածից պարզ է դառնում, որ ազգային ծեսերի վերականգման և յուրացման խնդրի լուծումն է ընկած տոնածեսերի կազմակերպան առանձնահատկությունների հիմքում։ Այսինքն, ծեսի կազմակերպումը, օրինակ, նախակրթարանում՝ բացի իր բուն ընթացքից, ենթադրում է մի քանի՝ իրար հաջորդող փուլերի համախումբ։

Հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն։ Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ։

Օրինակ, հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն։ Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները, խնջույքները, տոնական հագուստը, նվերները ունեն իրենց առանձնահատկությունները։ Դրանք բոլոր տոներում են առկա։ Ոչ մեկն ինքնանպատակ չէ։ Խնջույքները չեն կազմակերպվում ուտել-խմելու համար, յուրաքանչյուր ծեսին կազմակերպվող խնջույք պետք է համապատասխանի տվյալ ծեսի իմաստին, ըստ որի համապատասխանեցման համար էլ ընտրվում է ծեսը կազմակերպելու վայրը, ժամը, մասնակիցները, ուտեստների տեսակները։

Ծեսերը բեմականացումներ չեն և երեխաները իրենք են ստեղծում վերաիմաստավորում, խաղում, երգում այդ տոները։ Ծեսերի և տոների կազմակերպան կարևոր առանձնահատկություններից այն է, որ պետք է դրանց նոր կյանք տալ։ Դրա համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք։ Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան։ Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել

նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև, կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Մեր նպատակն է ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը:

Հաջորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, երեխաները խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

Ուզում ենք ընդգծել, որ ծեսը և տոնը կարելի է և պետք է դիտարկել ոչ միայն հոգևոր և կրթական դաստիարակության, այլ նաև բարոյական արժեքների և էկոլոգիական դաստիարակություն տեսանկյունից: Հենց այստեղ էլ <<թաքնված>> է տոների կազմակերպման մյուս առանձնահատկությունը: Երեխան, որը Ծառզարդարի տոնին պատրաստվելիս՝ ծառ, ծաղիկ կամ թուփ է տնկում, ջրում է ու խնամում, ծառին գովաբանում է ու քնքուշ խոսքեր ասում, հազիվ թե ուրիշի տնկած ծառը կոտրի: Արդյունքում շահում է և սովորեցնողը, և սովորողը, իսկ վերջին հաշվով՝հասարակությունն ու պետությունը, որն այսօր հենց այսպիսի քաղաքացու կրթական պատվեր է տվել մանկապարտեզին:

Հանրակրթության ընթացքում իրականացվող գործունեության մի շարք ձևեր դառնում են ծեսի բաղկացուցիչ: Մի դեպքում դա կարող է ծառատունկ կամ ծաղկատունկ լինել (Ծառզարդար, Զատիկ, կանանց տոն) , մի այլ դեպքում՝ ծեսի հետ կապված պաշտանմունքային նյութերի հատկությունների հայտնաբերում փորձերի և արարողական այլ միջոցներով( Վարդավառ, Համբարձում, գարնանացան, Ամանոր, Տրնդեզ): Մի այլ դեպքում սենյակային կամ այլ բույսերի աճեցում կարող է լինել (կանանց տոն, ուստարվա սկիզբ): Խոհանոցում ծիսական ուտելիք-կերակուրների պատրաստումը, որ հատուկ է համարյա բոլոր տոներին, իսկական բնական, լաբորատոր գործունեություն է:

Ծիսական իրերի պատրաստումը տեխնոլոգիական գործընթաց է, որը զարգացնում է երեխայի ստեղծագործական երևակայությունը, ճաշակը, մտածողությունը: Նա մի շարք հմտություններ է ձեռք բերում:

Կարևորում ենք ծիսական պարագաների, հագուստի նոր՝ ժամանակակից տարբերակներ մշակումը, դրանք ժամանակակից նյութերով, տարբեր թափոններով պատրաստելը: Կարևոր է նաև, որ ստեղծված պարագան ֆունկցիոնալ լինի և չդառնա փոշոտվող հերթական նմուշ: Խումբը տարբեր թափոններից զատկաձև աղբաման կամ այլ նպատակների համար տուփ է պատրաստում կամ պոլիէթիլենային շշերով, տարբեր ոչ պիտանի տարբեր լարերով ակլատիզ ու այլ տիկնիկներ է պատրաստում և կախում առաստաղից: Կարող են չորացած ճյուղերով կախարդական զատկածառեր պատրաստել, մոմլաթե տոպրակներով տարբեր կերպարներ և իրեր ստանալ, որոնք կօգտագործեն առօրյայում: Կամ էլ կարող են փայտե և այլ թափոններից զանազան շրխկաններ պատրաստել: Տոնը խորհրդանշող կամ այլ նախշերով կավե բաժակներ ու այլ իրեր կարող են պատրաստել: Պետք է միտքն աշխատի, մտածողությունը դուրս գա սովորականի սահմաններից, ստեղծագործական երևակայությունն ակտիվանա ու զարգանա: Հագուստի պարագաները ևս կարող են թափոններից պատրաստվել, հետաքրքիր ու յուրահատուկ լինել: Ճաշակի, մտքի, կոկիկության առկայության դեպքում ներկված տարբեր չափերի բանկաներն ու շշերը, մոմլաթը, հին կոճակները, ուլունքները, հովանոցները (այս ցուցակը կարելի է շարունակել), կարող են հաջողությամբ լրացնել հագուստը և տոնն ավելի գունագեղ ու հետաքրքիր դարձնել:

Ծիսական բացիկներն ու հրավիրատոմսերը ևս կարող են բազմազան ու անսովոր լինել ոչ միայն ձևով, այլև բովանդակությամբ:

Շատ կարևոր է, որ ծեսի բերած գիտելիքը չդառնա ինքնանպատակ, այլ կերպ ասած՝ չմնա պասիվ գիտելիք, այլ լինի շարունակական, անընդհատ ու անընդմեջ:

Ծիսակատարությունը ծեսի նախապատրաստական փուլում սովորողների գործունեության, դրա արդյունքների ամփոփումն է:

Ծեսերն այսօր մենք իրականացնում ենք որպես գործունեության ձև, որով երեխան ապրում է՝ խաղում է, երգում, պարում, ընկալում ու ճանաչում: Նախակրթարանում, առաջին, երկրորդ դասարաններում երեխան ծեսն ընկալում է իր երգած երգի, իր պարած պարի, իր ձեռքով պատրաստած ծիսական ուտելիքի, իրի, իր խաղացած խաղի կերպով: Ավելի մեծ տարիքում տոնին ավելանում է հետազոտական աշխատանքը[8]:

Ամբողջացնելով մեր հետզոտական աշխատանքի և նախկինում ունեցած գործնական փորձի արդյունքում ունեցած եզրահանգումները, առաջարկում ենք համառոտ թվարկել, թե ինչ ընթացք և վերջնարդյունք կունենանք տոնածեսերի ճիշտ կազմակերպման արդյունքում:

Առաջին փուլում՝

- ծանոթանանում ենք տվյալ ծեսին կամ տոնին,
- ծեսը վերականգնում ենք, նրան նոր կյանք տալիս:

Ծեսերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո՝ որոշում ենք, թե ինչ ճանապարհ են անցնելու երեխաները:

Ծիսակատարությանը նախապատրաստվելիս երեխաները.

- ծանոթանում են ծեսի հետ,
- սովորում են

  ա. խաղիկներ,

  բ. առած – ասացվածքներ,

  գ. հանելուկներ,

  դ. հեքիաթներ, պատմություններ, ավանդություններ,

8Корнеева Е. И. Фольклорные праздники и развлечения в патриотическом воспитании дошкольников (средний дошкольный возраст) - М., 1995, с. 130.

ե. երգեր:

զ. ավանդական պարեր,

- նկարում են

ա. ծիսական հերոսներին,

բ. ծիսական պատկերներ,

- պատրաստում են ծիսական պարագաներ,
- կատարում են բնագիտական փորձեր,
- մեծերի օգնությամբ վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Ի՞նչ խնդիրներ են լուծվում.

- նյութի յուրացում (լեզուն, մտածողության գեղարվեստական այլ արտահայտչամիջոցներ),
- գիտելիքների, կարողությունների, դրսևորում և կիրառում
- գեղարվեստական խոսքի մշակում,
- տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական),
- գրական - գեղարվեստական ճաշակի զարգացում,
- ինքնադրսևորում, ձերբազատում բարդույթներից:
- Այս աշխատանքները նպաստում են.
- երեխայի բառապաշարի հարստացմանը,
- մտածողության ձևավորմանը,
- ստեղծագործական երևակայության զարգացմանը,
- ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,
- բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը, ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,
- զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն),
- հնարավորություն են տալիս գնահատելու և յուրացնելու ազգային արժեքները, ավելի մոտիկից ճանաչելու իրենց դաստիարակներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին:

Երեխան կիմանա

- ազգային ծեսերը, տոները,
- ազգային սովորույթները,
- ազգային ավանդական պարերը,
- հայկական ժողովրդական և ծիսական երգերը,
- ծիսական կերպարները,
- ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը,
- ծիսական կերակրատեսակները,
- ծիսական պարագաները:

Երեխան կկարողանա

- պարել ազգային ավանդական պարեր,
- երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր,
- պատրաստել ծիսական պարագաներ,
- խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր,
- պատրաստել ազգային ծիսական կերակրատեսակներ:

Երեխան կլինի

- Ծեսը իմացող ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

**Միջառարկայական կապը ծեսի նախապատրաստական շրջանում և իրագործելիս**

Երաժշտություն – գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ժողովրդական երգեր:

Պար - գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ավանդական պարեր:

Մայրենի - գիտեն ծեսը, ծիսական ավանդություններ և զրույցներ, ասույթներ, առածասացվածքներ, բանաստեղծություններ, կարողանում են խաղարկել ծիսական գործողություններ, կարողանում են պատմել իրենց կատարածը, գեղարվեստորեն ներկայացնել, ինքնուրույն խաղարկել ստեղծագործական մոտեցում պահանջող ծիսական գործողություններ (օրինակ՝ Բարեկենդանի ծեսին):

Մարմնակրթություն - գիտեն և կարողանում են խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր:

Էկոլոգիա - կարողանում են պատրաստել ծիսական բուսական պարագաներ (օրինակ՝ զատկական ածիկ), գիտեն այն բույսերը, որոնք օգտագործվում են ծեսերին և ունեն դրանց մասին, այդ տարիքին համապատասխան, գիտելիքներ:

Ձեռարվեստ, կերպարվեստ - պատրաստել ծիսական պարագաներ, այդ թվում՝ հանդերձանք, կատարել նյութի ընտրություն:

Խոհանոց - պատրաստել կամ իմանալ ազգային ծիսական և այլ կերակրատեսակներ:

## ԳԼՈՒԽ 2

## ԻՆՏԵԳՐՎԱԾ ԲԱՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ «ԱՄԱՆՈՐՅԱ ՀՐԱՇՔ»

Պլան

**Թեմա՝** «Ամանորյա հրաշք»

**Խումբ՝** միջին

**Միջավայրը՝** խմբասենյակ, դահլիճ

**Նպատակը՝**

1. Երեխաներին հաղորդակից դարձնել տոնի հայկական ավանդական ասպեկտներին, ազգային մշակույթին, սովորեցնել տոնի հիմքում ունենալ իրական և վերմարդկային արժեքները։

**Խնդիրները՝**

1. Ամրապնդել երեխաների գիտելիքները Ամանորի և Սուրբ Ծննդի խորհուրդի մասին։
2. Զնավորել ընդհանուր պատկերացում տոնակատարության ընթացքի, ժողովրդի շրջանում վերջինիս ունեցած ընկալումների մասին։
3. Զնավորել ազատ շփվելու,ներկայանալու, շրջապատը զգալու և գնահատելու հմտություններ և կարողություններ։
4. Զարգացնել վերլուծական մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը։
5. Ճշգրտել երեխաների արդեն իսկ իրենց ունեցած տպավորությունները տոնի վերաբերյալ։
6. Երգերի, ոտանավորների, խաղիկների շնորհիվ զարգացնել խոսքը և ծանոթացնել նոր բառերի հետ։

**Վերջնարդյունք՝** իմանա Ամանորի խորհուրդը, տարբերի եղևնին տոնածառից

**Անհրաժեշտ պարագաներ՝** գունավոր թղթեր, պատրաստի գունավոր զոլակներ, գունավոր մատիտներ, սոսինձ, նկարներ, համակարգիչ, չզարդարված տոնածառ, դիտակտիկ այլ պարագաներ։

**Մեթոդներ**

Խմբավորում, խաղային, մտագրոհ, զրույց։

**Կարողունակություն՝** լեզվական և հաղորդակցական, մշակութային։

**Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ**. ԽՀ- (ա), (ե), (գ), Ի-(ա), (գ), (ե), (ը), Շ- (թ)

**Պարապմունքի ընթացքը**

*Խթանման փուլ*

- Նպատակահարմար է սկսել զրույց Ամանորի մասին։ Հնչում են հետևյալ հարցերը. «Ի՞նչ տոն ենք պատրաստվում նշել շուտով», «Ե՞րբ ենք նշում այդ տոները», «Ի՞նչպես ենք նշում»։
- Երեխաները կնստեն սեղանների շուրջ 5-6 հոգանոց խմբերով։ Յուրաքանչյուր խմբի կտրվեն նկարներ, որտեղ պատկերված կլինեն Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոնակատարության տարբեր դրվագներ։ Կհանձնարարվի առանձնացնել Ամանորյա տոնակատարությանը վերաբերվող նկարները և հակիրճ պատմել նկարում պատկերված դրվագների մասին։Կտրվի 5 րոպե ժամանակ;

*Իմաստի ընկալման փուլ*

Բարձրաձայն ընթերցանություն։Երեխաները կշարունակեն նստած մնալ սեղանների շուրջ։

Կընթերցվի Համո Սահյանի «Եղևնին » ոտանավորը։

- Ընթերցանության ավարտից հետո քննարկման և զրույցի միջոցով ամփոփում կկատարվի՝ օգտագործելով հետևյալ հարցերը.

-Ի՞նչ ճանապարհ է անցնում եղևնին մինչև տոնածառ դառնալը։

-Ի՞նչպես ենք զարդարում տոնածառը։

Հարցերին պատասխանելուց հետո խմբային աշխատանքի միջոցով կհանձնարարվի պատրաստել ամանորյա շղթաներ։

Իհարկե անհրաժեշտության դեպքում երեխաներին օգնություն կտրամադրվի։

Աշխատանքի ավարտից հետո իրենց պատրաստած շղթաներով կզարդարենք խմբասենյակի տոնածառը։

*Ֆիզկուլտ դադար*

Թևերը և մատիկները շարժում ենք կարծես փաթիլներ են թափվում երկնքից և երգում ենք «Փաթ-փաթ, փաթիլներ» երգը։

*Կշռադատման փուլ*

Երեխաները նորից կնստեն սեղանների շուրջ։

- Կհնչի հարց, թե ի՞նչ կուզեին նվեր ստանալ Ձմեռ Պապիկից։
- Մենք հակիրճ արագ-արագ կգրառենք յուրաքանչյուրի ցանկությունը և կդնենք ծրարի մեջ։
- Համակարգչով կցուցադրվի տարբեր երկրներում Ամանորի և Սուրբ Ծնունդի անցկացման նկարներ, որտեղ երևում են, թե մյուսներն ինչպես են տոնում այդ տոները, ինչպես են զարդարում տունը և եղևնին։ Երեխաները իմանում են, որ Ձմեռ Պապիկը ամեն երկրում ունի իր նախատիպը և, որ ամեն երկրում կան իրենց բնորոշ զվարճալի ամանորյա ավանդույթներ։
- Երեխաների հետ կգնանք նախասրահում դրված «Կախարդական արկղի» մոտ և մեր ծրարը կգցենք դրա մեջ, որպեսզի փոստի միջոցով հասնի Ձմեռ Պապիկին։
- Վերջում մեր դահլիճում՝ զարդարված մեծ եղևնու մոտ կերգենք Արփինե Բաբախանյանի և Մարինե Հարությունյանի հեղինակած «Ամանորի երգ»-ը, ինչի շնորհիվ հեքիաթային տրամադրությունը կփոխանցվի բոլորին։

## Եզրակացություն

Եվ այսպես, ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով փորձարկումները, եկանք հետևյալ եզրահանգումների՝

- Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Տեխնոլոգիական խնդրի հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական, հոգեբանական առանձնահատկությունները և կարիքները: Ծեսերի իրականացումը մանկապարտեզում նպատակ ունի երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության բազմաշերտ արժեքները՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքների ձևավորմանը: Ճիշտ է, մանկահասակ երեխաները ամբողջովին չեն կարող ընկալել ծեսերի իմաստն ու նշանակությունը, սակայն, նրանց ճիշտ ուղղորդելով և օրինակ ծառայելով, կարելի է շատ մեծ արդյունքների հասնել:
- Ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Ծեսը, որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեություն, նպաստում է նախակրթարան, ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը: Ծեսի յուրացման, կրթության, ըմբռնման հիմքը անհրաժեշտ է դնել դեռ վաղ տարիքից՝ այսինքն նախակրթարանից: Նախակրթարանում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է, այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը, այլև իրագործվում է լավագույն ազգային նյութով:
- Գործնականում ունեցած մեր փորձը ցույց է տալիս, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

## Առաջարկություն

Ագային ծեսերի և տոների իրագործման հետաքրքիր փորձ կարող են լինել համագործակցային նախագծերը, որոնք, անշուշտ, կլինեն քառակի արդյունավետ և բազմաբովանդակ: Մենք առաջարկում ենք համագործակցային նախագծեր իրականացնել այլ մանկապարտեզների հետ համատեղ: Այդ նախագծերի շնորհիվ.

- Կրթական համագործակցությունը կակտիվանա տարբեր ուսումնական հաստատությունների հետ
- Ծեսը կատարում է միավորիչ դեր. ուստի, դրանով իսկ կամրանան համագործակցային խմբերի կապը
- Հեռանկարներ կստեղծվեն համագործակցության հետագա զարգացման համար

Տեղի կունենա

•ծեսի հանրահռչակում

•գիտելիքի և փորձի փոխանակում

•ծեսի տարածաշրջանային առանձնահատկությունների յուրացում

•սովորողը կդառնա բանահավաք

•ծեսը կդառնա համատեղ ձեռքբերում

•կստեղծվի ընդհանուր կրթական միջավայր:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## Գրքեր, մենագրություններ


1. Ալեքսանդրյան Է.Ա., Նախադպրոցական մանկավարժություն, դասագիրք, Երևան, 2003:
2. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. ,Մանկավարժություն, Երևան, 2005:
3. Ներսիսյան Լ., Մեթոդական համակարգը գեղարվեստական մանկավարժության մեջ: Գեղարվեստական միտք, Երևան, 2012
4. Ներսիսյան Լ., Ազատ հաղորդակցության և ինքնակրթության դերը ուսուցման համակարգում: Գեղարվեստական միտք: Երևան, 2013թ.
5. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005:
6. Մկրտչյան Ս., Տոներ. հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ, Երևան, 2020:
7. Մկրտչյան Ս., Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016:
8. Վարդումյան Ս., և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ (ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար), Երևան, 2005:
9. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Տեսություն, մեթոդներ, գնահատում, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, 2003:
10. Ионин Л. Г. Социология культуры, М., 2004,
11. Козлова С. А., Куликова Т. А. К 59 Дошкольная педагогика: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений. - 3-е изд., исправ. и доп. - М., 2001.
12. Корнеева Е. И. Фольклорные праздники и развлечения в патриотическом воспитании дошкольников (средний дошкольный возраст) - М., 1995.
13. Магомедов Н. М. Методология и методика свободного воспитания. - Самара, 1995.
14. Народное искусство в воспитании детей / Под ред. Т. С. Комаровой. - М., 1997.